

ՍՈՒՐԵՆ ՔՐՄՈՅԱՆ

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ,
իրավաբանական գիտությունների թեկնածու

ԺԵՆՅԱ ՄԱՐՈՒՏՅԱՆ

«Իրավախախտում կատարած անձանց
վերականգնողական կենտրոն» ՊՈԱԿ, իրավաբան

**ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՅ ԵՎ
ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐԻ ԱՌՈՂՁՈՒԹՅԱՆ
ՊԱՀՊԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

Հոդվածը վերաբերում է կալանավորված անձանց և դատապարտյալների առողջության պահպանման իրավունքին: Դրանում վերլուծված են ներպետական բոլոր այն իրավական ակտերը, որոնք երաշխավորում են անազատության մեջ գտնվող անձանց առողջության պահպանման հիմնարար իրավունքը, այդ թվում՝ բավարար սնունդ և բժշկական օգնություն ստանալը, դրա իրականացման և վերահսկման մեխանիզմները:

Ինչպես նաև անդրադարձ է կատարվել ոլորտային առկա խնդիրներին, հնարավոր լուծման եղանակներին, բժշկական գաղտնիքի կարևորությանն ու պահպանման կարգին:

Հիմնարար- առողջության պահպանման իրավունք, ներպետական օրենսդրական ակտեր, բժշկական օգնություն, բավարար սնունդ, բուժական ուղղիչ հիմնարկ, դատապարտյալի բուժասնիտարական և բուժկանխարգելիչ օգնություն, բժշկական գաղտնիք:

Առողջության իրավունքը, հանդիսանալով հիմնարար իրավունք, օրգանապես կապված է մարդու մյուս հիմնական իրավունքների իրացման հետ: Այն վերաբերում է ոչ միայն ժամանակին և համապատասխան բժշկական սպասարկում ստանալու իրավունքին, այլև պահանջում է առողջության մյուս որոշիչ կարևոր գործոնների առկայություն, այնպիսիների, ինչպիսիք են համարժեք սննդամթերքն ու դրանց սննդային արժեքը, մաքուր խմելու ջրի և սանիտարական պայմանների, հագուստի և կացարանի, մաքուր օդի, ֆիզիկական վարժությունների ու բարոյական խթանների հասանելիությունը:

Ազգային օրենսդրությունը անդրադարձ է կատարել այս կարևորագույն իրավունքի պաշտպանությանը: Եվ այս հոդվածում կներկայացվեն բոլոր այն ներպետական իրավական ակտերը, որոնք կարգավորում են սույն ոլորտը:

ՀՀ Սահմանադրության 85-րդ հոդվածի համաձայն՝

1. Յուրաքանչյուր ոք, օրենքին համապատասխան, ունի առողջության պահպանման իրավունք:

2. Օրենքը սահմանում է անվճար հիմնական բժշկական ծառայությունների ցանկը և մատուցման կարգը:

«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքում ամրագրված է, որ այն ապահովում է անձի առողջության պահպանման սահմանադրական իրավունքի իրականացումը: Օրենքի 4-րդ հոդվածը սահմանում է բժշկական օգնություն և սպասարկում ստանալու մարդու իրա-

վունքը, որի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, տարիքից, առողջական վիճակից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, Հայաստանի Հանրապետությունում ունի բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք:

Յուրաքանչյուր ոք իրավունք ունի բժշկական օգնություն և սպասարկում ստանալ անվճար կամ արտոնյալ պայմաններով՝ պետության կողմից երաշխավորված առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում:

Օրենքն ամրագրում է նաև պացիենտի հիմնական իրավունքները, մասնավորապես, օրենքի համաձայն բժշկական օգնության դիմելիս, ինչպես նաև բժշկական օգնություն և սպասարկում ստանալիս յուրաքանչյուր ոք իրավունք ունի՝

ա) ընտրել բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողին.

բ) ստանալ բժշկական օգնություն և սպասարկում՝ հիզիենայի պահանջներին համապատասխանող պայմաններում.

գ) պահանջել բժշկի օգնությանը դիմելու փաստի, իր առողջական վիճակի, հետազոտման, ախտորոշման և բուժման ընթացքում պարզված տեղեկությունների գաղտնիության ապահովում՝ բացի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերից.

դ) իրագրել լինել իր հիվանդության մասին և համաձայնություն տալ բժշկական միջամտության համար.

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ե) հրաժարվել բժշկական միջամտությունից, բացի սույն օրենքով նախատեսված դեպքերից.

զ) արժանանալ հարգալից վերաբերմունքի՝ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից:

Վերոնշյալ օրենքի 16-րդ հոդվածով սահմանված է, որ առանց մարդու կամ նրա օրինական ներկայացուցչի համաձայնության թույլատրվում է իրականացնել բժշկական օգնություն և սպասարկում մարդու կյանքին սպառնացող վտանգի, ինչպես նաև շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդությունների դեպքերում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Այսպիսով, կարելի է հավաստել, որ յուրաքանչյուր ոք կամ նրա օրինական ներկայացուցչին իրավունք ունի հրաժարվել բժշկական միջամտությունից կամ պահանջել ընդհատել այն, բացի սույն օրենքի 16-րդ հոդվածով նախատեսված դեպքերից:

Իսկ ինչ վերաբերում է բժշկական միջամտությունից հրաժարվելու փաստին, ապա հնարավոր հետևանքների նշումով, այն գրանցվում է բժշկական փաստաթղթերում և հավաստվում հիվանդի կամ նրա օրինական ներկայացուցչի կողմից:

«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածը առանձին անդրադարձ է կատարել ձերբակալված, կալանավորված և ազատագրված վայրերում պատիժ կրող անձանց բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքին: Առանձին անդրադարձ է կատարվել նաև ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 4-ի 318-Ն որոշման 1-ին հավելվածում, որի համաձայն պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք ունեցող անձանց շարքում են ձերբակալվածները, կալանավորված անձինք և ազատագրված դատապարտվածները:

Որպես պացիենտի իրավունքների երաշխիք՝ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածը պարտավորություններ է սահմանում բուժաշխատողի համար, մասնավորապես, հոդվածի համաձայն մատուցվող ծառայությունները պետք է լինեն որակյալ և անվտանգ, ինչպես նաև բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողները պարտավոր են ապահովել ցուցաբերվող բժշկական օգնության և սպասարկման քանակական ու որակական բնութագրիչների համապատասխանությունը սահմանված չափանիշներին: Օրենքում ձերբակալվածների և կալանավորված անձանց իրավունքների վերաբերյալ առանձին հոդվածի առկայությունը չի նշանակում, որ օրենքի համապատասխան հոդվածով սահմանված պացիենտի իրավունքները վերաբերելի չեն դատապարտյալներին:

Այդուհանդերձ հարկ է նշել, որ քրեակատարողական հիմնարկներում օրենքով սահմանված պացիենտի (հիվանդի) իրավունքների ապահովումը հաճախ լուրջ խնդիրների առաջ է կանգնեցնում:

ՀՀ Քրեակատարողական օրենսգիրքը նույնպես անդրադարձ է կատարել քրեակատարողական հիմնարկներում մարդկանց առողջության պահպանման իրավունքին: ՀՀ Քրեակատարողական օրենսգրքի 12-րդ հոդվածի համաձայն՝ դատապարտյալի հիմնական իրավունքների շարքում է առողջության պահպանման իրավունքը, այդ թվում՝ բավարար սնունդ և բժշկական օգնություն ստանալը:

Ինչ վերաբերում է դատապարտյալի բուժանիտարական և բուժկանխարգելիչ օգնությանը, ապա այն կազմակերպվում է Հայաստանի Հանրապետության առողջապահության ոլորտը կարգավորող օրենսդրությանը համապատասխան: Սա նշանակում է, որ օրենսդիրը ամրագրել է ազատագրված վայրերում գտնվողների համար առողջապահության ոլորտի նույն իրավունքները, որոնք ունեն նաև ազատության մեջ գտնվողները: Դատապարտյալին բուժանիտարական և բուժկանխարգելիչ օգնությունն արդյունավետ ապահովելու նպատակով կազմակերպվում է բուժական ուղղիչ հիմնարկ: Ուղղիչ հիմնարկի վարչակազմը պատասխանատվություն է կրում դատապարտյալի առողջության պահպանմանն ուղղված սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային միջոցառումները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

Ձերբակալված կամ կալանավորված անձանց առողջության իրավունքը սահմանված է նաև «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ կետով, որի համաձայն՝ ձերբակալված կամ կալանավորված անձն իրավունք ունի առողջության պահպանման, այդ թվում՝ ստանալ բավարար սնունդ, անհետաձգելի բժշկական օգնություն, ինչպես նաև զննվել իր ընտրած բժշկի կողմից իր դրամական միջոցների հաշվին: Իսկ ինչ վերաբերում է, որպես տույժի միջոց, սննդի որակը կամ սննդարարությունը սահմանված նվազագույն չափաբաժիններից պակասեցնելուն, ապա դա արգելված է օրենքով:

Ինչպես նաև վերոնշյալ օրենքում ամրագրված է, որ ձերբակալված կամ կալանավորված հղի կանայք, կերակրող մայրերը, անչափահասները, ինչպես նաև ձերբակալված կամ կալանավորված հիվանդ անձինք ապահովվում են անվճար հատուկ սննդով, որի տեսականին և նվազագույն չափաբաժինները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Վերոգրյալից կարելի է ենթադրել, որ օրենսդիրը արդարացիորեն առավել մանրամասն անդրադարձ է կատարել հատկապես խոցելի խմբերին պատկանող անձանց տար-

րական կարիքներին, ովքեր ունեն ավելի մեծ ուշադրության և հոգածության կարիք:

Նույն օրենքի համաձայն՝ կալանավորվածներին պահելու վայրում պետք է աշխատի ընդհանուր մասնագիտացում ունեցող առնվազն մեկ բժիշկ: Մասնագիտացված բուժօգնության կարիք ունեցող ձերբակալված կամ կալանավորված անձը փոխադրվում է հատուկ մասնագիտացված կամ քաղաքացիական բուժհաստատություն: Այստեղ կարելի է եզրակացնել, որ քաղաքացիական բուժհաստատությունում մատուցված ծառայություններից օգտվելու իրավունքը լրացուցիչ երաշխիք է, որ քրեակատարողական հիմնարկում գտնվող անձը պատշաճ բուժօգնություն կստանա:

Այն դեպքում, երբ ձերբակալված կամ կալանավորված անձի մոտ մարմնական վնասվածք է հայտնաբերվում, ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի բուժաշխատողը կամ հրավիրված բուժաշխատողն անհապաղ կատարում է բուժզննություն, որին կարող է մասնակցել ձերբակալված կամ կալանավորված անձի ընտրած բժիշկը: Բժշկական զննությունը իրականացվում է ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմի ծառայողի լսողության, իսկ մինչև բժշկի կողմից հակառակը չպահանջելը՝ նաև տեսողության սահմաններից դուրս: Բուժզննության արդյունքները սահմանված կարգով գրանցվում են անձնական գործում, և այդ մասին իրազեկում են հիվանդին, ինչպես նաև քրեական վարույթն իրականացնող մարմնին:

Ձերբակալված կամ կալանավորված անձի մոտ ծանր հիվանդություն հայտնաբերելու դեպքում, որը կարող է հանգեցնել նրա հոգեկան խանգարման կամ մահվան, համապատասխան հիմնարկի պետք է բժշկական եզրակացության հիման վրա միջնորդում է քրեական վարույթն իրականացնող մարմնին և հսկողություն իրականացնող դատախազին՝ հարկադրանքի միջոցը վերացնելու կամ փոխելու վերաբերյալ:

Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ արգելվում է ձերբակալված կամ կալանավորված անձին ենթարկել որևէ բժշկական կամ գիտական փորձի՝ անկախ վերջինիս համաձայնությունից: Այսպիսի իրավիճակներում նախևառաջ պետք է առաջնորդվել ՀՀ Սահմանադրության 26-րդ հոդվածով, որի համաձայն.

1. Ոչ որ չի կարող ենթարկվել խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:
2. Մարմնական պատիժներն արգելվում են:
3. Ազատությունից զրկված անձինք ունեն մարդասիրական վերաբերմունքի իրավունք:

«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածը նույնպես

պես անդրադարձել է այս հարցին, համաձայն որի՝ բժշկական օգնությունը և սպասարկումը պետության կողմից սահմանադրորեն երաշխավորված իրավունքներն են, և արգելվում է ձերբակալված կամ կալանավորված անձին ենթարկել որևէ բժշկական կամ գիտական փորձի՝ անկախ վերջինիս համաձայնությունից: Սակայն, ըստ ՀՀ Քրեական օրենսգրքի, հարկադիր բուժում կարող է նշանակվել հանցանք կատարած այն անձանց նկատմամբ, ովքեր տառապում են հոգեկան հիվանդությամբ, և հոգեկան խանգարումները կապված են այդ անձանց կողմից այլ էական վնաս պատճառելու հնարավորության կամ իր կամ այլ անձանց համար վտանգավորության հետ: Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցները կարող են նշանակվել միայն դատարանի վճռով և իրենց ամրագրումն են ստացել ՀՀ Քրեական օրենսգրքի 98-րդ հոդվածում, որի համաձայն բժշկական բնույթի հարկադրանքի միջոցները հետևյալն են՝

- 1) հոգեբույժի մոտ արտահիվանդանոցային հսկողությունը և հարկադիր բուժումը,
- 2) հոգեբուժական կազմակերպությունների ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունքում հարկադիր բուժումը,
- 3) հոգեբուժական հիվանդանոցի հատուկ տիպի հոգեբուժական բաժանմունքում հարկադիր բուժումը:

Այսպիսով, վերը շարադրվածից հետևում է, որ ազատագրված անձն ազատ է իր առողջության իրավունքի տնօրինման հարցում, սակայն այն սահմանափակվում է, երբ լուրջ վտանգ կարող է սպառնալ ինչպես իր, այնպես էլ այլ անձանց կյանքին կամ առողջությանը:

ՀՀ Արդարադատության նախարարի՝ 2008 թվականի մայիսի 30-ի 44-Ն հրամանը նույնպես սահմանում է, որ արգելվում է կալանավորվածներին և դատապարտյալներին բժշկական, գիտական կամ այլ փորձերի ենթարկելը՝ անկախ նրանց համաձայնությունից:

2006 թվականի մայիսի 26-ին ՀՀ կառավարությունն ընդունել է «Կալանավորված անձանց և դատապարտյալների բուժսանիտարական և բուժկանխարգելիչ օգնությունը կազմակերպելու, առողջապահական մարմինների բուժական հիմնարկներից օգտվելու և այդ նպատակով դրանց բժշկական անձնակազմին ներգրավելու կարգը հաստատելու մասին» թիվ 825-Ն որոշումը:

Որոշմամբ հաստատված են այնպիսի կարևորագույն դրույթներ, ինչպիսիք են կալանավորված անձանց և դատապարտյալների բուժսանիտարական և բուժկանխարգելիչ օգնությունը կազմակերպելու, առողջապահական մարմինների՝ բուժական հիմնարկներից օգտվելու և այդ նպատակով դրանց բժշկական անձնակազմին ներգրավելու կարգը, պատիժը կրելուն խոչընդոտող ծանր

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

հիվանդությունների ցանկը, ինչպես նաև թերապևտիկ բնույթի հիվանդությունների, հոգեկան հիվանդությունների, հոգեակտիվ նյութերից (թմրամիջոցներ, ալկոհոլ, տոքսիկ և այլ նյութեր) կախվածության և հակում ունեցող հիվանդությունների, մաշկային հիվանդություններով և սեռավարակներով, աղիքային վարակիչ հիվանդություններով տառապող հիվանդությունների նկատմամբ դինամիկ հսկողության ժամանակացույցերը:

825-Ն որոշմամբ սահմանված՝ կալանավորված անձանց և դատապարտյալների բուժկանխարգելիչ աշխատանքները ներառում են կալանավորված անձանց և դատապարտյալների անհետաձգելի, արտահիվանդանոցային և հիվանդանոցային բժշկական օգնությունը:

Կալանավորվածներին պահելու վայր ընդունվելիս (այդ թվում՝ տարանցմամբ) անձինք անցնում են նախնական բժշկական զննություն, որի արդյունքներն արձանագրվում են համապատասխան մատյանում՝ բժշկական օգնություն ցույց տալու և մարմնական վնասվածքի կամ առողջական վիճակի վերաբերյալ այլ զանգատ արձանագրելու նպատակով: Կալանավորված անձի կամ դատապարտյալի բժշկական զննության արձանագրումը պետք է ներառի բժշկական զննության ենթակա անձի կողմից արված բոլոր հայտարարությունների, օբյեկտիվ բժշկական զննության արդյունքների ամբողջական պատկերը և բժշկի եզրակացությունը:

Բոլոր բժշկական զննությունները պետք է անցկացվեն քրեակատարողական կամ այլ ծառայողների լսողության և տեսողության սահմաններից դուրս:

Եթե բժշկական զննության արդյունքում հայտնաբերված մարմնական վնասվածքը կամ առողջական վիճակի վերաբերյալ զանգատը, ըստ կալանավորված անձի կամ դատապարտյալի հայտարարության, հետևանք է նրա նկատմամբ հանցագործության հատկանիշներ պարունակող որևէ արարքի, ապա բժշկական զննություն իրականացնող անձը դրա մասին տեղյակ է պահում կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի վարչակազմին: Այստեղ հարց է առաջանում, թե ինչու բժշկական զննություն իրականացրած անձն ուղղակիորեն (անմիջապես) չի հայտնում իրավապահ մարմիններին ազատագրված անձի վիճակի վերաբերյալ, այլ հայտնում է կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի վարչակազմին, որոնք էլ իրենց հերթին հետազայում դրա մասին տեղյակ են պահում իրավասու մարմիններին: Այս հարցի կարգավորումը շատ կարևոր է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ մարմնական վնասվածք ստացած անձի նկատմամբ հանցագործության հատկանիշներ պարունակող արարքը իրավապահ մարմնի կողմից կարող է առավել բազմակողմ և մանրամասն կերպով ուսումնասիրվել

անմիջապես տեղեկացվելու դեպքում:

Ցանկացած բժշկական զննության արդյունքները, ինչպես նաև կալանավորված անձի հայտարարությունները և բժշկի եզրակացությունները պետք է մատչելի լինեն կալանավորված անձի կամ դատապարտյալի և վերջինիս կողմից լիազորված անձի համար:

Հարկ է հավելել, որ պատժախուց փոխադրված կալանավորված անձի կամ դատապարտյալի նկատմամբ իրականացվում է ամենօրյա բժշկական հսկողություն՝ այցելությունների ընթացքում գանգատների ներկայացման և անհրաժեշտության դեպքում՝ մասնագիտական հետազոտության հիման վրա: Առողջական վիճակի վատթարացումը կարող է հիմք հանդիսանալ կալանավորված անձին կամ դատապարտյալին բժշկի եզրակացության հիման վրա պատժախցից սահմանված կարգով դուրս բերելու համար:

Միաժամանակ հիմնարկից փոխադրվելիս կամ ազատվելիս դատապարտյալները ենթարկվում են վերջնական բժշկական զննության, որի արդյունքները գրանցվում են բժշկական քարտում:

Այսպիսով, որպես կանոն, քրեակատարողական հիմնարկ ընդունվելիս բոլոր կալանավորված անձինք և դատապարտյալները պետք է ստանան բժշկական խորհրդատվություն և տեղեկատվություն, և հիմնարկում գտնվելու ամբողջ ընթացքում բժշկական օգնություն ստանալը կալանավորված անձանց և դատապարտյալների համար պետք է հասանելի լինի ցանկացած պահի և առանց խոչընդոտների: Միևնույն ժամանակ կալանավորված անձը և դատապարտյալն իրենց հաշվին և իրենց ընտրությամբ պետք է հնարավորություն ունենան օգտվելու այլ բժիշկ-մասնագետների ծառայություններից՝ առողջության իրավունքի իրականացումը լիարժեք ապահովելու նկատառումներից ելնելով: Իրենց հաշվին և իրենց ընտրությամբ այլ բժիշկ-մասնագետների ծառայություններից օգտվելու համար անհրաժեշտ է մշակել այնպիսի մեխանիզմներ, որոնց դեպքում հնարավոր կլինի ըստ պատշաճի և անհրաժեշտությունից ելնելով՝ կազմակերպել կալանավորված անձանց և դատապարտյալների առողջության պահպանման իրավունքը:

Առողջության պահպանման իրավունքը չի կարելի պատկերացնել առանց բժշկական գաղտնիքի պահպանման իրավունքի: Քրեակատարողական հիմնարկում գտնվելու պարագայում կարևորագույն նշանակություն ունի նաև **բժշկական գաղտնիքի** պահպանումը, որը պետք է երաշխավորված և պահպանված լինի բժշկական անձնակազմի կողմից:

Այստեղ հարկ է նշել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 145-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում առանց մասնագիտական կամ ծառա-

յողական անհրաժեշտության բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող անձանց կողմից մարդու հիվանդության կամ բժշկական ստուգման արդյունքների մասին տեղեկություններ հրապարակելու համար:

Այսինքն՝ բժշկական գաղտնիք հանդիսացող տեղեկությունները կարող են տրամադրվել միայն դատարանի (դատավորի), դատախազության, նախաքննության, հետաքննության, ինչպես նաև այլ իրավասու մարմինների պահանջով՝ օրենքով նախատեսված դեպքերում և կարգով: Հրապարակել ասելով՝ տվյալ դեպքում հասկացվում է նշված տեղեկությունները որևէ եղանակով (բանավոր, գրավոր և այլն) երրորդ անձանց գիտությանը հասցնելը:

Սակայն անհրաժեշտ է նշել, որ ՀՀ օրենսդրությամբ բժշկական գաղտնիքի պահպանման և հրապարակման հետ կապված հարցերը ամբողջությամբ դեռ կարգավորված չեն՝ առաջացնելով օրենքում բաց, և մասնավորապես կարգավորված չէ քրեակատարողական հիմնարկի վարչակազմի կողմից բժշկական գաղտնիք պարունակող փաստաթղթերին ծանոթանալու և հրապարակելու իրավասությունը:

Բժշկական գաղտնիք պարունակող փաստաթուղթ է համարվում բժշկական քարտը, և կալանավորված անձին կամ դատապարտյալին առձեռն այն չի տրվում: Բժշկական քարտերը պահվում են բժշկական սպասարկման բաժնում կամ բաժանմունքում կամ խմբում՝ չհրկիզվող պահարանում. դրա հաշվառման և պահպանման համար պատասխանատու է հիմնարկի բժշկական սպասարկման բաժնի կամ բաժանմունքի կամ խմբի ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Բժշկական քարտերի հետ պահվում է նաև կալանավորված անձանց և դատապարտյալների ամբուլատոր բժշկական օգնության ցուցաբերման մատյանը:

Բժշկական քարտում պարունակվող տեղեկություններին ծանոթանալու նպատակով կալանավորված անձին կամ դատապարտյալին, ինչպես նաև նրանց գրավոր համաձայնությամբ մատնացույց արված անձանց տրվում են բժշկական քարտից քաղվածք կալանավորված անձի կամ դատապարտյալի առողջական վիճակի մասին:

Հիվանդ կալանավորված անձին կամ դատապարտյալին առողջապահական մարմինների բուժական հիմնարկներ բժշկական հետազոտման կամ բուժման նպատակով ուղարկելու դեպքում բժշկական քարտը՝ «Բժշկական գաղտնիք» վերտառությամբ, փակ ծրարի մեջ, տրվում է հիվանդ կալանավորված անձին կամ դատապարտյալին ուղեկցող անձին:

Բժշկական քարտի մեջ պետք է նշված լինեն բժշկական սպասարկման բաժնում կամ բաժան-

մունքում կամ խմբում կատարված բժշկական հետազոտությունների տվյալները, նախնական ախտորոշումը և փոխադրման պատճառը: Այստեղ նույնպես կարգավորված չէ քրեակատարողական հիմնարկի վարչակազմի կողմից բժշկական քարտի ուսումնասիրման կամ օգտագործման կարգը:

Այսպիսով, բոլոր վերոհիշյալ իրավական ակտերն ուղղված են ձեռքբերված կամ կալանավորված անձանց, մարդկային արժանապատվությունը չնվաստացնող պայմաններում, առողջության պահպանման իրավունքի բավարարմանը, հետևաբար պետք է ձեռնարկվեն հնարավոր բոլոր միջոցները իրական կյանքում վերջիններս լիարժեք իրագործելու համար: Եվ ի հավելումն պետք է ամրագրել, որ դատապարտյալների առողջության իրավունքը հանրային առողջության խնդիրներից է: Բանտարկյալները դուրս են եկել հասարակությունից և մեծամասնությունը ի վերջո հետ է դառնալով՝ իրենց հետ տանելով առողջական խնդիրներ և վարակիչ հիվանդություններ, որ նրանք ձեռք են բերել ազատագրվման ընթացքում՝ առաջացնելով հանրության համար մեծ վտանգ: Ուստի բանտային առողջապահության ինտեգրումը հանրային առողջապահության համակարգի շրջանակներում ոչ միայն թույլ կտա ապահովել առողջապահության իրավունքի համարժեքությունը բանտերի ներսում և բանտերից դուրս, այլ նաև հնարավորություն կտա բարելավելու առողջապահության շարունակականությունը, երբ բանտարկյալները արդեն ազատ են արձակվել:

Բանտարկյալների առողջության իրավունքը չպետք է առանձնացվի ամբողջ հանրության առողջության իրավունքից, որն ամրագրված է նաև ՄԱԿ-ի Հազարամյակի զարգացման նպատակների (ՀՁՆ) շարքում:

Եվ ի վերջո, պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ մարդուն ազատագրելու հիմնական նպատակը նրան ուղղելն ու վերադաստիարակելն է, ոչ թե պատժելն ու անմարդկային վերաբերմունքի արժանացնելը, ուստի ցանկացած պարագայում ազատագրված անձանց առողջության իրավունքի պաշտպանությունը պետք է իրական և լիարժեք լինի: Եվ ինչպես ասել է իր ելույթում Նեյտան Մանդելան. «Չես կարող լիովին ճանաչել այն ազգը, որի բանտերում դեռ չես եղել: Ազգի ճշմարիտ նկարագիրը ոչ թե նրանում է, թե վերջինս ինչպես է վերաբերվում իր բարձրաստիճան քաղաքացիներին, այլ նրանց, ովքեր գտնվում են քրեակատարողական հիմնարկներում»:

¹ Քանի որ ՀԱԿ Եվրոպայի հռչակագրի համաձայն ցանկացած երկրում քրեակատարողական հիմնարկներում առողջապահությունը պետք է հանդիսանա ընդհանուր առողջապահական համակարգի անբաժանելի մասը... (2003).

² www.un.org/millenniumgoals/index.html

Сурен Крмоян

Заместитель министра юстиции Республики Армения,
кандидат юридических наук.

Женя Марутян

«Реабилитационный центр правонарушителей» ГНКО,
юрист

РЕЗЮМЕ

Право на здоровье задержанных и осужденных лиц

В статье говорится о праве здоровья задержанных и заключенных лиц. В нем проанализированы все правовые акты Республики Армения, которые гарантируют фундаментальное право на здоровье тех лиц, которые лишены свободы, в том числе их достаточное питание и медицинская помощь, ее реализация и механизмы надзора.

А также в статье отражены проблемы вышеупомянутого сектора, возможные пути их решения, и важность сохранения надлежащей медицинской тайны.

Ключевые слова: право на здравоохранения, внутреннее законодательство, медицинская помощь и достаточное питание, медицинское исправительное учреждение, медико-санитарная помощь, врачебная тайна.

Suren Krmoyan

Deputy Minister of Justice of Republic of Armenia,
Candidate of legal sciences

Zhenya Marutyan

«Offenders' Rehabilitation Center» SNCO,
lawyer

SUMMARY

Detainees' and Convicts' Right to healthcare

This article refers to the detainees' and prisoners' right to healthcare. Here are analyzed all the domestic legal provisions that guarantee the fundamental rights to healthcare of prisoners, including sufficient food and medical care, its implementation and supervision mechanisms.

There are also raised the problems of the above-mentioned sector, its possible solutions and the importance of maintaining proper medical secrecy.

Keywords: Right to healthcare, domestic legislation, medical care and sufficient food, medical correctional institution, the prisoners' medical and sanitary assistance, medical secrecy.